ՌՈՒԲԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆԱՍԵԱՆԻ ԶԵԿՈՒՑԱԳԻՐԸ ՀԵՌԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԱՐԾՈՒԻ ԲԱԽՉԻՆԵԱՆ
artsvi@yahoo.com

Հայաստանի Ազգային Արխիւի Էջմիածնի Գերագոյն Հոգեւոր Խորհրդի ֆոնդերում պահւում է Ռուբէն արքեպիսկոպոս Մանասեանի (1886–1955)՝ Ամենայն Հայոց կաթողիկոս Գէորգ Ե.ին ուղղած զեկուցագիրը՝ գրուած 1925ին Սիբիր եւ Հեռաւոր Արեւելք կատարած ուղեւորութեան մասին (ֆոնդ 409, ցուցակ 1, գործ 1313, վաւերագիր 50-56):

Ռուբէն Արք. Մանասեանը հայ եկեղեցու պատմութեան ամէնից գայթակղալից դէմքերից է, գործելով Իրաքում եւ Իրանում՝ որոշակի դեր է կատարել տեղի հայ համայնքների կեանքում:

Զեկուցագիրը պարունակում է նաեւ արժէքաւոր տուեալներ՝ 1924-25ի Սիբիրի եւ Հեռաւոր Արեւելքի հայութեան վերաբերեալ:

Կատարել ենք ուղղագրական մանր հպումներ եւ կէտադրական շտկումներ:

***

Նորին Վեհափառութեան Տ. Տ. Գէորգ Ե. Կաթողիկոսին Ամենայն Հայոց

Ս. Էջմիածնի նուիրակ
Ռուբէն ծ. վարդապետից
Ամենախոնարհ Զեկուցում.

Ձերդ Սրբութեան 1924 թ-ի Յունիսի 19 N 413 կոնդակի համաձայն մեկնեցի Երեւանից դէպի Հեռաւոր Արեւելք՝ այցելելու տեղի ցրուած հայութեան: Ճանապարհին միայն Սամարայում իմացայ, որ Մոսկուայից առանց վիզէ[1] ստանալու անկարելի է Սիբերիայից անցնել Չինաստան, ուստիեւ շտապեցի Մոսկուա, որտեղ երկու ամսից յետոյ միայն բազմաթիւ դիմումներիս հետեւանքով հնարաւորութիւն ունեցայ վիզէ ստանալու եւ Սեպտեմբեր ամսի սկզբին Սիբերիայի ճանապարհով ուղեւորուեցի Մանժուրիա:

Սեպտեմբերի 25ի առաւօտեան Չինաստանի Մանժուրիա քաղաքը հասայ. ամբողջ Հայ համայնքը եկել էր կայարանի դիմաւորելու: Այդտեղի Հայութեան թիւն է 130 շունչ: Բոլորը առեւտրականներ եւ կալուածատէրեր, գլխաւորապէս քաղաքում տնատէրեր են, ունեն ազգային տուն, սեփական շէնքով, նուիրուած Թադէոս Սիրունեանի[2] կողմից, կայ ազգային կոմիտէ՝ նախագահութեամբ նոյն Թ. Սիրունեանի:

Մնացի այդտեղ մէկ ամիս, այդ ժամանակամիջոցում նկատեցի, որ տեղական համայնքը ապրում է գժտուած, պառակտուած, խռով միմեանցից, դատարաններում գործերը թափուած: Ինձ յաջողուեց ոչ միայն հաշտեցնել գժտուածներին, այլ եւ շատերը Չինական դատարանից հանում էին գործերը եւ յանձնում իմ տնօրէնութեան:

Յիշեալ համայնքը կրօնական մխիթարութիւնից միանգամայն զուրկ էր: Խարբինից քահանան գալիս է միայն Զատկին եւ Ջրօրհնեաց տօներին եւ միմիայն նրանց տները, որոնք ընդունում էին այդ քահանային: Կային երեխաներ 8-9 տարեկան, որոնք մկրտուած չէին՝ քահանայի հետ գժտուած լինելու կամ քահանայի պահանջած տուրքը չվճարելու պատճառներով:

Ժամերգութեան ժամերին լցում էին ազգային տունը, եւ իմ մի ամսեայ ներկայութիւնը Մանժուրիայում տօնական օրեր էին տեղական Հայ Գաղութի համար:

Հոկտեմբերի 29ին արդէն Խարբինումն էի: Մի քանի կայարան ընդառաջ էին եկել դիմաւորելու ծխատէր Ռոստոմեան քահանան[3] եւ կոմիտէի կողմից բժ. Միղդիսեան[4] եւ Նազարեան[5]: Խարբին կայարանում սպասում էին համայնքի մեծագոյն մասը: Տասնեակ օտոմոբիլների շարքը ուղեկցում էր ինձ դէպի Հայոց եկեղեցին: Եկեղեցում կատարուեց Հայրապետական մաղթանք: Բազմաթիւ ժողովուրդը լցուել էր եկեղեցին՝ ողջունելու Ս. Էջմիածնի ներկայացուցչին:

Մաղթանքից յետոյ պատրաստուած էր ճաշ քահանայի բնակարանում, նկատեցի, որ ներկայ եղողների մեծագոյն մասը հեռացաւ եկեղեցուց, ճաշին մնացին մի քանի հոգի միայն, թէեւ պատրաստութիւն տեսնուած էր 100 հոգու համար: Յետոյ պարզուեց, որ հեռացողները քահանայի հետ գժտուածներն էին, որոնք ո՛չ եկեղեցի են յաճախում եւ ո՛չ էլ ցանկացան այն բնակարանը մտնել, որտեղ քահանան է ապրում:

Երեք ամիս մնացի Խարբինում, որտեղ համայնքի խնդրի համաձայն անցկացրի նաեւ Ջրօրհնեաց տօները: Մինչեւ իմ գնալը տօները կատարուելիս են եղել հին տոմարով, Ջրօրհնեաց տօները իմ կարգադրութեամբ տօնուեց նոր տոմարով շատ մեծ դժուարութեամբ, որովհետեւ հակառակում էին Ռոստոմեան քահանան եւ կոմիտէն բժ. Միղդիսեանի նախագահութեամբ:

Այդ ժամանակամիջոցում մանրամասնութեամբ ծանօթացայ Խարբինի հայութեան կրօնական-հոգեւոր կեանքի հետ: Ինձ վրայ շատ ծանր տպաւորութիւն թողեց Խարբինը իր բազմամարդ, շուրջ 570 շնչից՝ կովկասահայերից-տաճկահայերից-ամերիկահայերից եւ պարսկահայերից կազմուած համայնքով:

Հայերի մեծագոյն մասը առեւտրականներ եւ երկաթուղային պաշտօնեաներ են, որոնց մէջ կան բարձրագոյն կրթութիւն ստացած անհատներ՝ ճարտարապետներ, բժիշկներ, փաստաբաններ եւ այլն: Բոլորը սառած

Հայոց եկեղեցուց՝ կրօնական մխիթարութիւն ստանում էին Ռուս եկեղեցուց:

Ամբողջ հայութիւնը սրտաբաց ընդունեց ինձ, յայտնեցին իրենց ցաւերը, բողոքեցին իրենց կրօնական անմխիթար վիճակի մասին, շատ ու շատ գանգատներ լսեցի Ռոստոմեան քահանայի մասին, ինքս ականատես եղայ շատ երեւոյթների, եկայ այն եզրակացութեան, որ բոլոր չարիքի պատճառը Ռոստոմեանն է, որին քահանայ անուանելը մեծ թիւրիմացութիւն է: Որքան շուտ հեռանայ այդ «ցեցը» հայութեան միջից, այնքան մեծ բարիք է Հեռու Արեւելքի Հայութեան համար եւ քանի Ռոստոմեանը Խարբինումն է կամ Հեռու Արեւելքում, Հայութիւնը կտրուած կը լինի իր եկեղեցուց եւ ենթակայ օտար եկեղեցիների[6]:

Խարբինում հրաւիրեցի ժողովի բոլոր կանանց, կազմակերպեցի կանանց կոմիտէ, յորդորեցի աջակցել եկեղեցու բարեզարդութեան, հրաժարուեցին եկեղեցուն որեւէ կերպով աջակցելուց, քանի Ռոստոմեան քահանան իր ընտանիքով ապրում է եկեղեցու շինութեան մէջ եւ քահանայ է համարւում եկեղեցու:

Այս մասին աւելի մանրամասն պատիւ կ'ունենամ զեկուցելու Ձերդ Վեհափառութեան առանձին յայտարարութեամբ, թէեւ համառօտ կերպով Խարբինի հայութեան կրօնական ծանր վիճակի մասին ես իր ժամանակին զեկուցել եմ դեռ Խարբինից:

Խարբինում ժողովուրդը աւելի մօտիկից ճանաչելով ինձ՝ աւելի էր կապւում ինձ հետ, իսկ դրա հակառակ մի փոքրիկ խմբակ Ռոստոմեան քահանայի հետ ամեն տեսակի որոգայթներ էին լարում ինձ վարկաբեկելու եւ իմ գործը անյաջողութեան մատնելու: Այս նկատելով՝ ժողովուրդը ընդհանուր ժողով գումարեց եւ որոշեց Ռոստոմեան քահանային ընդ միշտ հեռացնել Խարբինից որպես մի «չարիքի» Հեռաւոր Արեւելքում:

Դառնացած, հոգեկան ծանր տպաւորութեան տակ ես հեռացայ Խարբինից[7]:

Նոյեմբերի 24ին Չան-Չուն քաղաքումն էի, որտեղ ապրում են 53 շունչ հայեր, գլխաւորապէս Կովկասցիներ, որոնք պարապում են մասնաւորապէս «սեւ ապրանքի» (թիրաք) առեւտրով:

Այստեղ եւս շնորհիւ այս միատեսակ առեւտրի, շատերը կռւած, խռով, միմեանց վնասելիս. ինձ յաջողւեց բոլորին էլ հաշտեցնել եւ ժամերգութիւն կատարելով բոլորին հաւաքել միատեղ եւ միութիւն առաջ բերել: Նկատեցի, որ բոլորն էլ գիւղացիներ են, անգրագէտ կամ կիսագրագէտ:

Փետրւարի 21ին 1925 թ. Մուգդէնումն էի. տեղական 30 շնչից բաղկացած նիւթականապէս բոլորովին աղքատ համայնքը ընդունեց ամենաջերմ սիրով. այստեղ ժամերգութիւն կատարելով, 2 օրից յետոյ մէկնեցի Կորէա թերակղզու վրայով դէպի Ջափոնիա[8]:

Փետրւարի 26ին Կոբէ քաղաքումն էի, որտեղի փոքրաթիւ Հայ գաղութը գլխաւորութեամբ Տիկ. Դիանա Աբգարեանի[9] ցոյց տւեց ինձ ամենասր-

տագին վերաբերմունքը. ինքը՝ Տիկ. Աբգարեանը, չնայած իր պատկառելի տարիքին, շտապել էր «ամբողջ գաղութի հետ ծաղկեփունջով դիմաւորել եւ իր խորին յարգանքները մատուցանել Ս. Էջմիածնի ներկայացուցչին»:

Ամբողջ Ջափոնիայում ապրում են գլխաւորապէս նորջուղայեցիներ՝ 4 ընտանիք Կոբէում, 3 ընտանիք Տոկիոյում եւ 1 ընտանիք Արիմա ամառանոցում[10]՝ ընդամենը 8 ընտանիք 30 շնչով:

Տոկիոյում ոմն էրզրումցի Յովհաննէս Ղեւենեան[11], որը երկար տարիներ ապրում է Ջափոնիայում, ունէր Ջափոնուհի կին[12] եւ երեք աղջիկ[13], որոնք դեռ մկրտուած չէին: Կինը՝ Յուրուկո Միակոզաւան եւ Քիմիկո, Եւգենիա եւ Լիլի[14] աղջիկները մկրտուեցին իմ ձեռքով՝ ընդունելով Հայադաւանութիւն, իսկ Յովհաննէս Ղեւենեանը եւ Յուրուկո Միակոզաւան պսակուեցին Հայոց եկեղեցու ծէսով:

Մարտի 13ին Չինաստանի Հոնգկոնգ քաղաքումն էի, դիմաւորելու եկել էին Հայկ եւ Տիգրան Գրեգրի եղբայրները ամբողջ ընտանիքով: Սոքա յայտնեցին, որ Հոնգկոնգի բնակիչ Հայազգի յայտնի Սըր Խ. Պոլ Չէտէրը (Խաչիկ Պողոսեան Ծատուրեան[15]) խնդրել է, որ ես Հոնգկոնգում ապրեմ իր ծախքով եւ այցելեմ իրեն: Մարտի 14ին ներկայացայ Սըր Պոլ Չէտէրին, որի մասին իր ժամանակին Հոնգկոնգից գրաւոր զեկուցել եմ Ձերդ Սրբութեանը: Հոնգկոնգում ապրում են ընդամենը 19 շունչ Հայեր, բացառապէս Նոր Ջուղայից գաղթած:

Հոնգկոնգից ուղեւորուեցի Ջաւա կղզին: Ապրիլի 4ին արդէն Բատաւիա[16] քաղաքումն էի, որտեղ Ծաղկազարդի Կիւրակէ Հայոց եկեղեցում[17] պատարագեցի: Ներկայ էին 12 երկսեռ աղօթողներ, իսկ առաւօտեան ժամերգութեան ներկայ էր միայն 1 հոգի, որը եկեղեցու բակումն էր ապրում: Եկեղեցու ծխատէր Դաւիթ քահ. Մարգարեանը[18] յայտնեց, որ այդ 12 աղօթողները եկել էին ի պատիւ իմ գալստեան: Ուրիշ կիրակի այդքան էլ չեն գալիս:

Ինչպէս ամեն տեղ, Բատաւիայումն էլ այցելութիւններ կատարեցի եւ մօտիկից ծանօթացայ տեղական հայութեան հետ: Ընդամենը 40 շունչ հայութիւն կայ՝ այլասերուած[19] եւ կորցրած թէ՛ լեզուն եւ թէ՛ ազգային սովորութիւնները: Երկու ընտանիք գտայ՝ Պողոսեան եւ Ստեփանոսեան, որտեղ խօսում էին հայերէն: Քահանան՝ Տ. Դաւիթ Մարգարեան, մի տգէտ անձնաւորութիւն, չէ համապատասխանում տեղական շրջապատի պահանջներին: Նա հովւում է ինչպէս Ջաւա կղզու, նոյնպէս եւ հարեւան կղզիներում գտնուած Հայութեան:

Բատաւիայի եկեղեցին կառավարւում է մի վարչութեամբ, որը 1924 թից ընտրւում է ամբողջ Ջաւայի քաղաքներից եկած պատգամաւորների կամ նրանց ներկայացուցիչների քւէներով:

Այս առթիւ կազմւել է նոր կանոնադրութիւն, որի համաձայն առանց Սուրաբայա քաղաքի ընդհանուր ժողովի որոշման իրաւունք չունեն եկեղեցական որեւէ գումար ծախսելու: Եկեղեցին ունի կալւածքներ, որի ար-

դիւնքով կառավարում է թէ՛ եկեղեցին, եւ թէ՛ կարօտեալներին նպաստ է տրւում:

Զատկական տօներին արդէն Սուրաբայա քաղաքումն էի, որտեղ ապրում են 350 շունչ հայեր՝ բացառապէս նորջուղայեցիներ: Եկեղեցի չունենալու պատճառով ստիպւած եղայ միայն Զատկի երկուշաբթի մեռելոցին պատարագ մատուցանել բողոքականաց եկեղեցում, իսկ միւս Կիւրակէ օրը՝ անգլիական եկեղեցում: Հայրենիքի եւ եկեղեցու կարօտ ժողովուրդը լցւում էր եկեղեցին, կազմել էին երգեցիկ խումբ իմ այցելութեան առթիւ եւ երգեհոնի նւագակցութեամբ երգում էին Եկմալեանի պատարագը:

Սուրաբայում մնացի 22 օր. այդ ժամանակամիջոցում մանրակրկիտ կերպով կարողացայ ծանօթանալ նրանց կրօնական, բարոյական եւ տնտեսական կեանքի հետ, տեսայ, թէ ինչպէ՞ս կարօտ են կրօնական խօսք լսելու, կլանում էին Ս. Էջմիածնի եւ Հայաստանի մասին տւածս զեկուցումները, այս առթիւ երեք անգամ «Կոնկորդիա» ակումբի դահլիճում հաւաքոյթ եղաւ:

Սուրաբայի Հայութիւնը ունի դպրոց 45 աշակերտ-ուհիներով եւ 3 ուսուցիչ-ուհիներով, ղեկավարութեամբ Յորդանան Յորդանանեանի, այդ դպրոցի պատւոյ նախագահն էր Գէորգ Աբգարը[20]: Ներկայ եղայ դպրոցի դասաւանդման, շատ գնահատիչ տպաւորութիւն թողեց: Պարապմունքները տեղի էին ունենում ճաշից յետոյ Անգլիական դպրոցի շէնքում: Իմ ներկայ լինելու օրը տեղի ունեցաւ մրցանակաբաշխութիւն դպրոցական պիտոյքներից: Դպրոցը 4-դասեան է, դասաւանդւում է կրօն եւ միւս առարկաները Հայերէն լեզւով:

Բացի դպրոցից Հայ երիտասարդական միութիւնը ունի «Սպորտ-կլուբ» իր խաղադաշտով, որը մի ընդարձակ եւ կանաչազարդ դաշտ է քաղաքի մի ծայրին յատուկ շէնքով եւ ծաղկանոցով: «Սպորտ-կլուբը» ունի իր վարչութիւնը՝ նախագահութեամբ Մկրտիչ Յակոբեանի[21]: Վարչութիւնը հրատարակում է Հայկական սպորտային կեանքից ժողովածու պատկերազարդ գրքոյկներ:

Իմ այցելութեան առթիւ կազմակերպուեց Էջմիածնին օգնող յանձնաժողով նախագահութեամբ պ. Հայրապետ Յակոբեանի, որոնք խոստացան պարբերաբար հնարաւորութեան սահմաններում իրենց գաղութի կողմից օգնութիւն ցոյց տալ Ս. Էջմիածնին: Այդ եւ ընդհանուր ժողովում իմ ներկայութեամբ որոշւեց հիմք դնել Սուրաբայա քաղաքում հայկական ազգային տան, որի մէջ տեղաւորւելու են ե՛ւ Աղօթատունը, ե՛ւ դպրոցը, ե՛ւ այլ ազգային հաստատութիւններ: Միաձայն պատւոյ նախագահ ընտրւեց իր ներկայութեամբ եւ համաձայնութեամբ Գէորգ Աբգարը:

Հրաւիրեցի նաեւ կանանց ընդհանուր ժողով, որտեղ բացատրեցի կանանց կոմիտէի անհրաժեշտութիւնը եւ կատարելիք դերը այսքան բազմամարդ համայնքի մէջ, որի առթիւ ընտրւեց մի կոմիտէ Տիկ. Բալասան

Վարդանեանի նախագահութեամբ, մշակեց կանոնադրութիւն եւ առաջարկեց ինձ ի հաստատութիւն:

Սուրաբայայում ոգեւորութիւնը այնքան բուռն էր, տպաւորութիւնը այնքան զօրեղ, որ վերադառնալուս լուսաբացին կայարան էին եկել ամբողջ գաղութը, ծեր եւ մանուկ, կին եւ տղամարդ՝ վերջին անգամ իրենց յարգանքը մատուցանելու Էջմիածնի նուիրակին ծաղկեփունջեր նուիրելով: Գնացքը շարժուեց, դեռ երկար ժամանակ լսում էր կեցցէների ձայները:

Վերադարձիս կանգ առայ Բանդոնգ քաղաքում, որտեղ ապրում են 6 ընտանիք՝ 11 շունչ ջուղայեցիներ: Տեսնուեցի բոլորի հետ եւ 2 օրից Բատաւիա վերադարձայ:

Մայիսի 11ին Սինգապուրում էի: Սպասում էին, թէ ո՞վ է եկողը, որի մասին ինչ-որ նամակ էր ստացել եկեղեցու Հոգաբարձութիւնը եւ իրենց կողմից նախազգուշացրել էին թէ՛ Բատաւիայի եւ թէ՛ Սուրաբայայի իրենց ազգականներին եւ ծանօթներին: Սինգապուրի Սարգիս քահ. Սարգսեանն ինձ յայտնեց, որ ոչ մի յոյս չկայ Սինգապուրի հայութիւնից, որովհետեւ այդ նամակից յետոյ ընդհանուր տրամադրութիւնն է ձեռնպահ մնալ որեւէ օգնութիւն ցոյց տալուց: Սակայն ես չյուսահատուեցի, Կիւրակի օրը պատարագեցի եւ հրաւիրեցի ընդհանուր ժողովի, որտեղ որոշուեց անպայման օգնութեան գալ ինձ, եւ Հոգաբարձութեան նախագահ Կոստանդին Էդգեարը, որը նախազգուշացրել էր յիշածս քաղաքների իր ծանօթներին, ոչ միայն ինձ օգնութեան հասաւ, այլեւ ի դիմաց տեղական գաղութի խնդրում էր, որ ես համաձայնուեմ մնալ իրենց մօտ մշտական հովիւ:

Սինգապուրը ունի 82 շ[ունչ] հայ գաղութ, Հայոց եկեղեցին շինուած է քաղաքի կենտրոնում գլխաւոր փողոցի վրայ[22], ունի ընդարձակ կանաչազարդ բակ եւ երկյարկանի շէնք քահանայի համար: Գտայ եկեղեցին շատ բարեզարդ, մաքուր եւ վայելուչ պահպանուած, վիճակաւոր Սարգիս քահ. Սարգսեանը, որ այն օրերում իր ժամանակը լրանալու պատճառով պիտի հեռանար, կանգնած է քահանայական կոչման բարձրութեան վրայ:

Սինգապուրից վերադարձայ Շանհայ, որտեղ ապրում են 60 շունչ հայ, մեծագոյն մասը գաղթականներ Հայաստանից, որոնք Ամերիկա գնալու ճանապարհին մնացել են եւ ընկել ամենաաղքատ վիճակում: Մի հայ կաթոլիկ ընտանիք միայն՝ Պետրոս Չակալեան, որը սիրայօժար կերպով հոգաց իմ ապրուստի եւ ճանապարհի ծախքը իր անձնական միջոցներից եւ միշտ յուսադրում էր ինձ Շանհայի անկարգութիւնների օրերում[23], որի պատճառով ստիպուած եղայ 20 օր մնալ Շանհայում:

Յունիսի 22ին Թիանզին հասայ, այստեղի 4 շ[ունչ] Հայութիւնը բացառապէս տաճկահայեր են՝ եկած Ամերիկայից, գորգավաճառ Ամերիկահայերի ներկայացուցիչներ են, կրթուած համալսարանական կրթութեամբ, կապուած կրօնով ազգի, Հայրենիքի եւ Մ. Աթոռ Ս. Էջմիածնի սիրով տոգորուած: Այստեղ ժամերգութիւն կատարեցի բողոքականաց եկեղեցում: Իրենց ցանկութեանը ընդառաջ գնալով խօսեցի Էջմիածնի վիճակի մասին,

ու տեղական ժողովը որոշեց հանգանակել մի գումար եւ յատկացնել Էջ-միածնի սեղանատան կարիքներին:

Թիանզինի հայութիւնը չնայած ստացել էր մասնաւոր նամակ իմ վերաբերմամբ, բայց լաւ ճանաչելով նամակի հեղինակներին՝ արհամարհեց նրանց եւ ցոյց տւեց ինձ ամենաջերմ ընդունելութիւն:

Թիանզինից ուղեւորուեցի Ջափոնիայի վրայով դէպի Վլադիվոստոկ: Յուլիսի 20ին արդէն Վլադիվոստոկումն էի: Տեղական հայութիւնը շրջապատեց ինձ: Կեանքի ծանրութեան տակ ճնշւած, աղքատ վիճակում, հազիւ գոյութիւնները քարշ տւող, ցնցոտիների մէջ մօտ 42 տուն՝ 100 շունչ ունեցող գաղութը կարօտ էր իր հայ եկեղեցականին տեսնելու եւ ժամերգութիւն լսելու: Ունէին աղօթատուն քայքայւած վիճակում, եկեղեցական զարդեր, գրքեր եւ զգեստներ: Պատմում էին իրենց տխրահռչակ Ռոստոմեան քահանայի «քաջագործութիւնների» մասին, եւ թէ ինչպէս այդ բարի եւ լաւ քրիստոնեայ ժողովուրդը ստիպւած է եղել այդ չարիքը վերացնել՝ հեռացնելով ընդմիշտ Վլադիվոստոկից: Խնդրում էին, որ քահանայ ուղարկեմ իրենց համար, սակայն ո՛չ Ռոստոմեանի նման, այլ քահանայ բառի իսկական հասկացողութեամբ: Ընդհանուր ժողովում կային նաեւ կոմմունիստներ, որոնք նոյնպէս գտնում էին, որ Հեռու Արեւելքի Հայութեանը ի մի հաւաքել եւ ազգային կենտրոն դարձնել կարող է միայն եկեղեցին իր արժանաւոր գիտակից քահանայով, որը գրաւելով եկեղեցու շուրջը հայ գաղութը՝ կը կարողանայ կազմակերպել գաղութային օրինակելի կեանք՝ կապւած ընդհանուր հայութեան հետ:

Վլադիվոստոկից անցայ Սիբերիայի գլխաւոր քաղաքները, որտեղի հայութիւնը ոչնչով չէր տարբերւում Վլադիվոստոկի գաղութից: Բոլորն էլ առեւտրականներ, արհեստաւորներ, տիրող պետական օրէնքների տակ ճնշւած, քայքայւած սոսկալի տուրքերի շնորհիւ, ով հնարաւորութիւն է ունեցել, հեռացել է տեղից, ով մնացել է, նա չի կարողացել հեռանալ:

Այսպիսով, Նիկոլսկ-Ուսուրիյսկի քաղաքում ապրում էին 56 շ[ունչ], Խաբարովսկ՝ 55 շ[ունչ], Բլագովեշչենսկ՝ 42 շ[ունչ], Չիտա՝ 50 շ[ունչ], Իրկուտսկ՝ 125 շ[ունչ], Իննոկենտեւսկ (Իրկուտսկու արւարձան)՝ 34 շ[ունչ], Օմսկ՝ 59 շ[ունչ], Չերեմուխովո՝ 21 շ[ունչ], Նիկոլաեւսկ՝ 15 շ[ունչ]: Վերջին երկու քաղաքները չեմ այցելել:

Ամբողջ Արեւելքի Հայ Գաղութներին այցելելիս նկատում էի այն ջերմ ընդունելութիւնը, որ ցոյց էին տալիս ինձ, կարօտ էին մի հոգեւորականի, որին ընդունեն հարազատի պէս: Հիւրասիրում էին, պատւում, բոլորն էլ ցանկանում էին, որ ես իրենց մօտ լինեմ, իրենց հացը օրհնեմ: Ես էլ կատարում էի նրանց բոլոր կրօնական պահանջները: Բոլոր քաղաքներում նշխարք էի գործում, տները այցելում, օրհնում հացն ու աղը, նշխարք նուիրում:

Եկեղեցիներում, չեղած դէպքերում՝ մասնաւոր բնակարաններում ժամ էի ասում, հրաւիրում բոլորին, քարոզում էի, մխիթարում: Քաղաք չի եղել,

որտեղի հայութիւնը չհաղորդէր, ականատես էի լինում, թէ ինչպէս ժամերգութեան «Առաւօտ լուսոյ», «Լոյս զուարթ», «Տէր ողորմեա» երգելիս զգացւում էին եւ արտասւում:

Ուրախութեան հետ դժգոհում էին, թէ ինչու՞ այսքան ժամանակ Էջմիածինը չէ յիշել իրենց, թէ ինչու՞ զրկւած են եղել հոգեւոր մխիթարութիւնից:

Նկատեցի նաեւ այն խոշոր կրօնական մրցումը, որ գոյութիւն ունի Հեռաւոր Արեւելքում: Կաթոլիկներ, բողոքականներ, պրաւոսլաւներ[24] եւ այլ կրօնական համայնքներ իրենց քարոզներով, վայելուչ երգեցողութեամբ բարեզարդ եկեղեցիները եւ աղօթատները գրաւում են դէպ իրենց շատ հայերի եւ զարմանալի չէ, որպիսի հանգամանքը անպայման հետեւանք է այն անտարբերութեան, որ ունեցել է դէպի այդ կրօնասէր եւ հայրենասէր ժողովուրդը հոգեւոր կենտրոնը կամ աւելի ճիշտը՝ թեմական իշխանութիւնը:

Մի տեղի քահանան տգէտ, միայն Մաշտոցը ձեռքին մեռել թաղելու ընդունակ, իսկ մի այլ տեղի քահանան, ինչպէս Խարբինի Ռոստոմեանն է, մեծ ինտրիգան եւ անբարոյական, որի շնորհիւ Հեռու Արեւելքի Հայութիւնը Բացարձակապէս հեռացել է Հայոց եկեղեցուց: Քանի-քանի մկրտութիւններ կատարւել են Ռուս եկեղեցում, քանի պսակներ՝ Ռուս քահանայի ձեռքով: Նոր սերունդը, որ մեծանում է օտար հորիզոնի տակ, նա չի ստանում Հայոց եկեղեցում որեւէ կրօնական մխիթարութիւն եւ հեշտութեամբ ընկնում է թէ՛ կուլտուրապէս զօրեղ եւ թէ՛ կրօնապէս վայելուչ համայնքի ծոց եւ օտարանում Հայոց եկեղեցուց:

Հարաւային կղզիների Հայ Գաղութները, ինչպէս վերը յիշեցի, բացարձակապէս նորջուղայեցիներից, իսկ Հեռու Արեւելքի եւ Սիբերիայի Հայ Գաղութը բաղկացած է կովկասահայերից եւ տաճկահայերից, որոնք մեր գաղթականութեան սեւ օրերին հեռացել են Սիբերիայի խորքերը, Ամերիկա անցնելու նպատակով եւ մնացել են Սիբերիայում: Այս տարբեր երկրների ժողովրդին, տարբեր բնաւորութեամբ եւ հասկացողութեամբ, կապողը միայն եկեղեցին է եւ հոգեւորականը, այդ էր պատճառը, որ իմ շուրջը խմբուեցին, փառաւոր ընդունելութիւններ սարքեցին, արտայայտեցին իրենց սրտի զգացմունքը, զգացին, որ Ս. Էջմիածինը որպէս գորովագութ մայր չէ մոռացել իրենց եւ խղճի հանգստութեամբ կարող եմ արտայայտուել, որ իմ այցելութեամբ մի բարոյական մեծ կապ ստեղծուեց Հեռու Արեւելքի եւ Ս. Էջմիածնի մէջ եւ սպասում են, որ ապագայում եւս այս կապը պէտք է չընդհատւի եւ իրենց կրօնական կեանքը հարթւի եւ աւելի կապւեն Հայաստանեայց եկեղեցու հետ, մանաւանդ շատերը ամուսնացել են Ռուս եւ այլ ազգութեան կանանց հետ, ունեն զաւակներ եւ ենթակայ՝ շատ հեշտութեամբ հեռանալու Հայոց եկեղեցուց, եթէ Էջմիածինը Հեռու Արեւելքի կրօնական կեանքը թողնէ այժմեան վիճակում: Իմ խորին համոզմամբ, պէտք է անմիջապէս հեռացւի Արեւելքից Ռոստոմեան քահանան՝ նշանա-

կելով մի պատկառելի քահանայ կամ վարդապետ եւ պէտք է այսպիսի այցելութիւններ կատարուեն 2-3 տարին մի անգամ:

Այցելած քաղաքներում աւելորդ չէի համարում ներկայանալ տեղական կառավարութեան ներկայացուցիչներին, որոնք ցոյց էին տալիս սիրալիր ընդունելութիւն: Պեկինում ներկայացայ խորհրդային իշխանութեան դեսպան Լեւոն Կարախանին[25], որը իր սիրալիր ընդունելութեամբ ինձ ցոյց տուեց մեծ աջակցութիւն՝ վերադառնալու խորհրդային իշխանութեան սահմանները:

Ճանապարհին Սինգապուրից մինչեւ Շանհայ վերադառնալիս նաւում ծանօթացայ անգլիական թագաւորի կրտսեր որդու՝ պրինց Գէորգի[26] հետ, որը 9 օրուան ընթացքում ցոյց էր տալիս ինձ ուշադիր վերաբերմունք եւ սիրալիր հիւրասիրութիւն: Պրինց Գէորգը բաժանուելուց առաջ նուիրեց ինձ իր մեծադիր նկարը՝ խնդրելով իմ նկարը, որ եւ յանձնեցի[27]:

Վերոգրեալը զեկուցանելով մնամ Ձերդ Վեհափառութեան ամենախոնարհ որդի եւ ծառայ՝

Ռուբէն ծայրագոյն վարդապետ
15 Դեկտեմբեր 1925 թ.
Ս. Էջմիածին

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Visa - ֆրնս., մուտքի արտօնագիր:

[2] Թադէոս Մկրտչի Սիրունեան (Տարաս Նիկիտի Սուրինով, 1883, Ախալցխա-1930), արդիւնաբերող, գործարար, ունեցել է գործարաններ եւ տներ Մանջուրիա քաղաքում եւ Չոյբալսանում (Մոնղոլիա): 1929ին Մոնղոլիայում ձերբակալուել է համայնավարների կողմից եւ ամիսներ անց գնդակահարուել:

[3] Եղիշէ (Արտաշէս) քահանայ Ռոստոմեանը (1868, Ներքին Ագուլիս-1932, Հարբին), 1910ին հաստատուել է Վլադիվոստոկում, 1918ին՝ Հարբինում (Խարբին)՝ դառնալով չինահայութեան հոգեւոր առաջնորդը:

[4] Ստեփանոս Գասպարի Մղտեսեանը (Մղդսեան, Միգդիսով, 1867, Թելաւ-1933, Հարբին), Հարբինի Հայ Ազգային Վարչութեան նախագահ, բժշկական վերատեսուչ, որոշ ժամանակ ղեկավարել է Հարբինի առողջապահական գործը:

[5] Հաւանաբար՝ Վարդան Նազարեան:

[6] Մինչդեռ չինաբնակ Լեւոն Մելիք-Օհանջանեանը Հայաստանում ապրող մօրը գրած նամակում վկայել է. «*Ռուբէն վարդապետի ոտը կոտրուէր այստեղ չգար: ... այդ վարդապետը իր կեանքով ու վարքով մեզ խայտառակեց, իսկ խեղճ տէրտէրի դէմ... այնպիսի ինտրիգներ սարքեց, որ ժողովուրդը երկու մասի բաժանեց*» (ՀԱԱ, ֆ. 409, g. 1, գ. 4709, թ. 15):

[7] Իսկապէս սկզբում չինաբնակ հայերը լաւ են ընդունել Մանասեանին: Մանջուրիայի հայերը 1924ի Հոկտեմբերի 20ին կաթողիկոսին շնորհակալական նամակ են յղել Թադէոս Սիրունեանն եւ Համազասպ Պսակեանը՝ գոհունակութիւն յայտնելով իրենց քաղաքում Էջմիածնից պատուիրակ ունենալու համար: Սակայն նոյն Պսակեանը յետագայում իր յուշերում պիտի արձանագրէր, որ Ռուբէն

վարդապետը սադրիչ գործունէութիւն է ծաւալել Մանջուլիում եւ Հարբինում՝ նպատակ ունենալով Ծայրագոյն Արեւելքը դարձնել առանձին թեմ եւ դառնալ թեմի առաջնորդ: Սկսուել է մի տգեղ պայքար, փոխադարձ ատելութիւն հարբինահայերի մէջ, համայնքը բաժանուել է վարդապետականների եւ ոչ-վարդապետականների. առաջինները ոչ միայն իրենց զաւակներին դադարեցրել են ուղարկել հայկական դպրոց, որտեղ դասաւանդում էր Ռոստոմեանը, այլեւ փորձել են փակել վարժարանը, որտեղ երեխաներն անվճար կրթութիւն էին ստանում: Երկու կողմերը շարունակաբար Էջմիածին են ուղարկել բողոքագրեր. մի մասը ծանր մեղադրանքներ է ներկայացրել Ռուբէն վարդապետին, որը ծխատէր քահանայից խլել է նրա օրուայ հացը՝ մկրտութեան եւ պսակի արարողութիւնները, կատարել անօրինական գործողութիւններ: Միւս կողմը եւ Ռուբէն վարդապետը պախարակել են Ռոստոմեան քահանային (Արծուի Բախչինեան, *Հայերը Չինաստանում. Հայ-Չինական Պատմամշակութային Կապերը*, Երեւան, ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտ, 2017, էջ 140-2):

[8] Այստեղ, Մուկդէնի «Միակօ» հիւրանոցի տնօրինութիւնը հեռացրել է Ռուբէն Վրդ.ին, մեղադրելով նրան բռնաբարական արարքի մէջ: Նա մեկնել է յաջորդ օրը՝ չվճարելով կեցութեան համար եւ թողնելով իր իրերը, եւ անցել Կոբէ (Ճապոնիա): Միջադէպի մասին պաշտօնապէս հաղորդել է Մուկդէնի ոստիկանութեան ղեկավար Ֆուջիհարան՝ հիմնուելով ճապոնացի սպասուհիների պատմածների վրայ, եւ լուրը չին ու ճապոնական մամուլին սփռել է Հեռաւոր Արեւելքի Հեռագրական Գործակալութիւնը: Այս մասին գրել է նաեւ Հարբինի *Տրիբունա* ռուսալեզու թերթը ("Скандал с Армянским Архимандритом: Архимандрит Рубен Пытался Изнасиловать 18-летнюю Японку (Գայթակղութիւն հայ արքեպիսկոպոսի հետ. արքեպիսկոպոս Ռուբէնը փորձել է բռնաբարել 18ամեայ ճապոնուհուն), *Трибуна*, 1, 03, 1925: Ռուբէն վարդապետը Կոբէից բողոքագիր է յղել *Տրիբունա*ի խմբագրութեանը՝ նշելով, որ դա զրպարտութիւն է: Հարբինի վարդապետականների թիմը Էջմիածին բողոքի նամակներ է գրել՝ պահանջելով նրա վերադարձը, մինչդեռ Հարբինի հայ համայնքի վարչութիւնը դիմում է յղել Էջմիածին՝ պնդելով դատի տալ նրան՝ որպէս քրէական յանցագործի:

[9] Դիանա Աբգար (1857–1938), ճապոնաբնակ գործարար, անգլիագիր գրող, հրապարակախօս, հանրային գործիչ, 1920ին ՀՀ պատուաւոր հիւպատոս Ծայրագոյն Արեւելքում:

[10] Արիմայում բնակուել է Էսոյեան ընտանիքը:

[11] Յովհաննէս (Իւան) Ղեւենեան կամ Սագոյեան (1888, Էրզրում–1952, Տոկիо), հացթուխ, հրուշակագործ, ստեղծել է այսօր Ճապոնիայում ազգային համարուող մելոնպան քաղցր հացատեսակը (Արծուի Բախչինեան, *Հայ-Ճապոնական Պատմական եւ Մշակութային Առնչութիւնները*, Երեւան, 2018, էջ 150-3):

[12] Յուրուկо Միակոզաւա (Յուրու Սագոյեան, 1888–1962):

[13] Աւելի ետք ծնուել է Սագոյեանների չորրորդ դուստրը՝ Աննան (յետագայում՝ Աննա Սմիթ, մահ. 1959, ԱՄՆ):

[14] Լիլի Սագոյեան Ղեւենեանը եղել է ռադիոհաղորդավար, աշխատակցել Բոսթոնի *Հայրենիք Ուիքլի*ին:

[15] Աւելի ճիշտ՝ Պօղոս Խաչիկ Աստուածատրեան (1846, Կալկաթա–1926, Հոնկոնգ), մեծահարուստ, պետական, հանրային գործիչ: Մանասեան Վրդ.ին Էջմիածնի համար յանձնել է 1000 անգլիական ոսկի:

[16] Այժմ՝ Ջակարտա:

[17] Կառուցուել է 1854ին, քանդուել 1964ին՝ որպէս հոլանդական գաղութատիրութեան յուշարձան:

[18] Դաւիթ Մարգարեանը 1923-26, 1929-34՝ եղել է Բատաւիայի հայոց եկեղեցու քահանան (Artsvi Bakhchinyan, "An Unpublished Research about the Armenians in Indonesia," *Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. ԻԵ.*, 2003, էջ 404):

[19] Այստեղ՝ ուծացած իմաստով:

[20] Ինդոնեզաբնակ գործարար, ՀԲԸՄ անդամ, ունեցել է ընդարձակ հողատարածքներ եւ գործարաններ, զբաղուել է տապիոկայի արտահանմամբ («Ջաւահայերի Տնտեսական Կեանքը», *Ալիք*, 27 Հոկտեմբեր 1935):

[21] Մկրտիչ Յակոբեան (1885, Նոր Ջուղա–1971, Աւստրալիա), մարզական եւ թատերական գործիչ: 1923ին հիմնել է Սուրաբայայի մարզական ակումբը:

[22] Սինգապուրի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին կառուցուել է 1834-35ին:

[23] Նկատի ունի 1925ի Մայիսին Շանհայում ճապոնացի ծառայողների կողմից չինացի գործիչի սպանութիւնը, որից յետոյ Շանհայի քաղաքային ոստիկանութիւնը Մայիսի 30ին ձերբակալել է այդ չինացու սպանութեան դէմ բողոքող 15 ուսանողների եւ նրանց ձերբակալման առթիւ ցուցարարների գնդակահարութիւնը:

[24] Ուղղափառներ (ռուսերէն):

[25] Լեւոն Կարախան (Կարախանեան, 1889-1937), խորհրդային պետական գործիչ, դիւանագէտ, 1923-1927՝ ԽՍՀՄ դեսպան Չինաստանում:

[26] Արքայազն Ջորջ, Քենթի դուքս (1902–42):

[27] Հանդիպումը տեղի է ունեցել «Մալվա» շոգենաւի վրայ. Մանասեանը Ջորջին սովորեցրել է նուագել եւ երգել «Հայաստան» երգը («Հայերը Ծայրագոյն Արեւելքի Մէջ», *Հայրենիք*, 27 Սեպտեմբեր 1925):

ARCHBISHOP RUBEN MANASYAN'S REPORT ON THE ARMENIAN COMMUNITIES OF THE FAR EAST

(Summary)

Artsvi Bakhchinyan
artsvi@yahoo.com

The text is the report of Archbishop Ruben Manasyan (1886–1955) addressed to Catholicos Gevorg V (1847-1930) of Etchmiadzin, written in 1925 about his journey to Siberia and the Far East.

Manasyan particularly reports on the handful of Armenians living in the Far East cities of Russia, China, Japan, Singapore and Indonesia. He reports on their religious, educational and public activities as well as the prevailing atmosphere in the community and provides some demographic data.

The report contains rare information about the Armenian communities of the Far East.